

**ԵԼՀ գիտխորհրդի՝
27.01.2022թ. կայացած նիստի
թիվ 5 արձանագրություն**

Օրակարգ

1. 2021-2022 ուս. տարվա առկա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին՝ ներկայացնելով և շնորհավորելով գիտխորհրդի կազմում նոր անդամներին: Նա հավելեց, որ ֆանսիական բանասիրության ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Չ. Հարությունյանը իր դիմումի համաձայն՝ առողջական խնդիրների պատճառով դադարեցրել է ամբիոնի վարիչի ՝ իր լիազորությունները, և ամբիոնի ղեկավարումը ստանձնել է նույն ամբիոնի Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Սարգսյանը: Գիտխորհրդի կազմը համալրվել է երկու նոր անդամներով՝ ֆրանսիական բանասիրության ամբիոնի Բ.Գ.Թ., ասիստենտ Ամալյա Հարությունյան, ով համալրում է Գ.Սարգսյանի անդամակցությունը և գերմանական բանասիրության ամբիոնի Բ.Գ.Թ., ասիստենտ Շաչիվյան Նաիրա, ով անդամանցելու է նույն ամբիոնի Բ.Գ.Թ., ասիստենտ Նելլի Խանոյանի փոխարեն: Գ.Բարսեղյանը նշեց նաև, որ նպատակահարմար է համարում գիտխորհրդի կազմի մեջ կիրառել ռոտացիոն սկզբունք:

1. Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2021-2022 ուս. տարվա առկա ուսուցման ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփմանը: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ ընթացակարգը բավարար է համարում, եղել են որոշ թերություններ, որոնք ժամանակի ընցքում կարելի է շտկել: Նա ներկայացրեց ԵԼՀ ֆակուլտետի ինը ամբիոնների քննաշրջանի արդյունքները:

4-րդ կուրս լեզու և գրականություն-23 ուսանող

լավ-4, գեր.-1

խառը-8 ուս.

չն.-1 ուս.

բավ.1 ուս.

լուծարք-4 ուս.

չն.՝ գործուղում/հարգելի/-2 ուս.

4-րդ կուրս/ֆրանս./ 4-ուս.

խառը- 2 ուս.

լավ -2 ուս.

չն.-1 ուս.

չն.-գործուղում /հարգելի/1 ուս.

4-րդ կուրս/իսպան./ 4-ուս.

խառը-2ուս.

չն.՝ գործուղում/հարգելի/-2 ուս.

4-րդ կուրս/գերմ./ 5-ուս

խառը 2 ուս.

գեր.-1 ուս.

լուծարք-2 ուս.

4-րդ կուրս/իտալ./ -2 ուս

չն.՝ գործուղում/հարգելի/-2 ուս.

3-րդ կուրս անգլ/իսպ.-36 ուս.

Գեր- 3 ուս.

Լավ- 3 ուս.

Խառը-18 ուս.

Բավ.-3 ուս.

Չն.-5 ուս.

Լուծարք-4 ուս.

3-րդ կուրս անգլ/իտալ.- 10 ուս.

Լավ- 6 ուս.

Խառը-2 ուս.

Չն.-1 ուս.

Լուծարք- 1ուս.

3-րդ կուրս անգլ/գերմ.-19ուս.

Լավ- 8 ուս.

Խառը-5 ուս.

Բավ.-1 ուս.

Չն.-3 ուս.

Լուծարք-2 ուս.

3-րդ կուրս անգլ/ֆրանս.- 42 ուս.

Գեր.- 1 ուս.

Լավ- 8 ուս.

Խառը- 23 ուս.

Բավ.- 1 ուս.

Չն.-2 ուս.

Լուծարք- 7 ուս.

2-րդ կուրս անգ/ֆրանս-43 ուս

Գեր-3 ուս.

Լավ-5-ուս.

Խառը-19 ուս.

Չն.-8 ուս.

Բավ.-2 ուս.

Լուծարք 6 ուս.

2-րդ կուրս անգ/իտալ.-17 ուս.

Գեր- 5 ուս.

Լավ-3ուս.

Խառը- 3 ուս.

Չն.- 5 ուս.

Լուծարք- 1 ուս.

2-րդ կուրս անգ/գերմ .-23 ուս.

Գեր- 7 ուս.

Չն.-3 ուս.

Խառը -9 ուս.

Լավ- 4 ուս.

2-րդ կուրս անգ/իսպ .- 42ուս.

Չն.- 23 ուս.

Խառը-9 ուս.

Լավ-2 ուս.

Լուծարք- 8 ուս.

1-ին կուրս անգ/գերմ .-19 ուս.

Գեր.- 9 ուս.

Լավ- 5 ուս.

Խառը- 3 ուս.

Չն.- 1 ուս.

Լուծարք- 1 ուս.

1-ին կուրս անգ/ֆրանս.-47 ուս.

Գեր.- 18 ուս.

Լավ- 9 ուս.

Բավ.- 1 ուս.

Խառը- 3 ուս.

Լուծարք- 13 ուս.

Չն.- 3 ուս.

1-ին կուրս անգ/իսպ.-49 ուս.

Գեր.- 8 ուս.

Լավ- 15 ուս.

Բավ.- 8 ուս.

Խառը- 8 ուս.

Լուծարք- 10 ուս.

1-ին կուրս անգ/իտալ.-15 ուս.

Գեր.- 5 ուս.

Լավ-6 ուս.

Բավ.- 1 ուս.

Լուծարք- 3 ուս.

2. ԵԼՀ ֆակուլտետի դեկանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակի առաջադրված ուսանողների տվյալները:

ԼՍԵՅԻՆ՝

ԵԼՀ ֆակուլտետի անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՅԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց երկրորդ կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

1. Նունե Արայի Գրիգորյան «Լեզվաբանություն» մասնագիտության « Միջմշակութային հաղորդակցություն/ֆրանսերեն» կրթական ծրագրի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի /Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ /:
2. Աստղիկ Գազիկի Շմավոնյան «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի /Ֆ.Վերֆելի անվան կրթաթոշակ/:
3. Միլվա Հրաչյայի Գասպարյան «Լեզվաբանություն» մասնագիտության «Թարգմանչական գործ`անգլերեն

/հայերեն» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի/Ն.Աճառյանի անվան կրթաթոշակ/:

3.Ընթացիկ հարցեր:

- Գ.Բարսեղյանը անդրադարձավ 2020-2021թ. առկա և հեռակա սոց.հարցումներին: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ պատկերը բավարար է, սակայն կան դասախոսներ՝տարբեր ամբիոններից, որոնք չեն հատել 3-ի շեմը: Այդ հանգամանքը նա մտահոգիչ համարեց և հորդորեց ամբիոնների վարիչներին կարևորել նշված հանգամանքը և միջոցներ ձեռնարկել՝լուծում գտնելու այդ հարցի առնչությամբ:
- Դեկանը անդրադարձավ նաև ԵՊՀ ռեկտորի հայտարարությանը այն մասին, որ ամբողջ համալսարանը կանգնած է որոշ ամբիոնների միավորելու վրանգի առջև: Նա հավաստիացրեց իր գործընկերներին, որ դեռևս այդ հարցին առնչվող զեկուցագիր չի ուղարկել ԵՊՀ ռեկտորին և անելու է իր ուժերի ներածի չափով հնարավորը, անգամ անհնարինը՝ ամբիոնների քանակը պահպանելու համար: Իհարկե, նա հավաստիացրեց, որ նաև չի կարող շրջանցել ԵՊՀ-ում գործող այդ հարցին վերաբերող օրենքը: Գ.Բարսեղյանը հավատացրեց իր գործընկերներին, որ ինչ որոշում էլ կայացվի՝ պետք է լինի ամբիոնների ղեկավարների հետ համատեղ քննարկումների արդյունքում:
- Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին՝
- Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոսներ՝ Բ.Գ.Թ.

Մ.Օհանյանի և Ա. Օհանյանի «Developing Creative Writing: From Paragraph to Essay » դասագիրքը երաշխավորել վերահրատարակման:

- Ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս Լիլյա Վարդանյանի հեղինակած «Տարամտությունները ֆրանսերենում բնական լեզվաբանության համատեքստում» մենագրությունը և «Manuel de français; Le vocabulaire à travers l'art» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:
- Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Անուշ Ռոստոմի Սեդրակյանի՝ «Ֆրանսիական պոեզիա /2-րդ մաս/» ժողովածուն տպագրության:
- Հաստատել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի «Վարչագործարարական թարգմանություն» մասնագիտության գծով մագիստրոսական կրթական ծրագրի 1.5 տարի տևողությամբ առաջարկը:
- Հաստատել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի «Թարգմանչական գործ (անգլերեն)» մասնագիտության գծով մագիստրոսական կրթական ծրագրի 1 տարի տևողությամբ առաջարկը:

- Հաստատել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի «Զբոսաշրջային թարգմանություն (անգլերեն-հայերեն)» մասնագիտության գծով մագիստրոսական կրթական ծրագրի 1.5 տարի տևողությամբ առաջարկը:

Երաշխավորել դիմելու ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր տիկին Է. Ասրիյանին՝ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի մագիստրատուրայում նոր՝ «Հաղորդակցություն և միջմշակութային հետազոտություններ (անգլերեն և հայերեն)» մագիստրոսական ծրագիր ներդնելու հարցը:

- ԵԼՀ ֆակուլտետի

դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բադալյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝
Մ.Դալայան

